acba

# 2024թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 125-րդ հոդվածի և ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2008թ. մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի 49-րդ կետի պահանջները՝ ներկայացնում ենք 2024թ. ընթացքում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից բացահայտված էական փաստերն ու տեղեկությունները, և միաժամանակ հաստատում ենք, որ սույն հաշվետվության մեջ ներառված փաստերն ու տեղեկությունները հավաստի և լիարժեք են ու չեն պարունակում այնպիսի բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել տվյալ փաստաթղթի իմաստն ու ամբողջականությունը:

Տեղեկացնում ենք, որ նշված նյութերը հրապարակվել են նաև Բանկի ինտերնետային կայքում՝ հետևյալ հղումներով.

https://www.acba.am/hy/announcements/invest-1637070599

https://www.acba.am/hy/announcements/about-bonds

Առդիր 14 էջ:

| Հակոբ Անդրեասյան | Գլխավոր գործադիր տնօրեն | | 23.05.2025թ. |
|---|---|---|---|
| (անուն,ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ / "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office

+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am

ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

***Էական փաստեր և տեղեկություններ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ:***

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2024 թվականի տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2024 թվականի մայիսի 14-ին սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ՝ «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» ("FOODPARK BY DOWNTOWN") վայրում, ժամը 15:00-ին: Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն կունենան մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին և քվեարկել հատուկ նախատեսված կապի միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում:

- *Ընդհանուր ժողովին մասնակցելու և տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք կունենան ԱԿԲԱ Բանկի բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2024 թվականի ապրիլի 29-ի ժամը 15:30-ի դրությամբ ընդգրկված են եղել Բանկի բաժնետերերի ռեեստրում: Շահութաբաժինների չափի և վճարման մասին վերջնական որոշումը կընդունվի ընդհանուր ժողովի կողմից, սակայն Բանկի խորհրդի կողմից որոշվել է բաշխել 5,5 մլրդ դրամ ընդհանուր շահույթ: Այս բաշխումը նախատեսում է մեկ բաժնետոմսիդիմաց 1,000 դրամ շահութաբաժնի վճարում, որը նախորդ տարվա համեմատ ընդհանուր բաշխված շահույթից 1,1 մլրդ դրամով, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց՝ 200 դրամով ավելին է:*

***Էական փաստեր և տեղեկություններ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2024 թվականի տարեկան ընդհանուր ժողովի որոշումների վերաբերյալ:***

Տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բանկ) բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով) գումարվել է 2024 թվականի մայիսի 14-ին, ժամը 15:00-ին, «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» ("FOODPARK BY DOWNTOWN") կենտրոնում (հասցե՝ ՀՀ, 0002, ք.Երևան, Իսակովի 11), սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ: Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն են ունեցել մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին տեսակապով և քվեարկել առցանց եղանակով կամ քվեաթերթիկի միջոցով:

*Ընդհանուր ժողովի կողմից քննարկվել և կայացվել են հետևյալ որոշումները.*

**1. Բանկի 2023թ. տարեկան շահույթը բաշխելու մասին.**

*Որոշվել է Բանկի 2023թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել ընդհանուր 5,500,000,000 (հինգ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ: Այս բաշխումը նախատեսում է մեկ բաժնետոմսի դիմաց 1,000 դրամ շահութաբաժնի վճարում, որը նախորդ տարվա համեմատ ընդհանուր բաշխված շահույթից 1,1 մլրդ դրամով, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց՝ 200 դրամով ավելին է: Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարվել են 2024թ. մայիսի 21-ին, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2024 թվականի ապրիլի 29-ի, ժամը 15:30-ի դրությամբ Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:*

**2. Բանկի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ձևը հաստատելու մասին.**

*Որոշվել է Բանկի խորհրդի 2024թ. ապրիլի 18-ի թիվ 153-Բ.7 որոշմամբ հաստատված՝ մինչև 485,000 հատ լրացուցիչ հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնել փակ բաժանորդագրությամբ:*

3. **Բանկի գործող խորհրդի անդամների լիազորությունները դադարեցնելու և նոր անդամներ նշանակելու մասին.**

- *Ժողովի որոշմամբ դադարեցվել են Խորհրդի անդամներ Արմեն Մկրտչյանի և Հրաչ Սարգսյանի լիազորությունները:*
- *Բերնարդ դը Վիտն ընտրվել է Բանկի Խորհրդի անկախ անդամ:*
- *Գայանե Հայրապետյանն ընտրվել է Բանկի Խորհրդի անդամ ընտրելու:*

Սույնով տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Գարաժ մոլ» մասնաճյուղի անվանումը և հասցեն փոխվել են: Մասնաճյուղը վերանվանվել է որպես «Աջափնյակ» մասնաճյուղ և ս.թ. հունիսի 3-ից կգործի ք.Երևան, Ֆուչիկի փողոց 1/1 շենք, 300 հասցեում:

Սույնով տեղեկացնում ենք, որ ս.թ. մայիսի 02-ից մինչև ս.թ օգոստոսի 01-ը ներառյալ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխվող Բանկի անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային՝ **AMACBAB2EER9** թողարկման, դրամային և **AMACBAB2FER6** թողարկման դոլարային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամկետը երակարաձգվել է մինչև ս.թ. օգոստոսի 21-ը ներառյալ:

Վերոնշյալ որոշումը կայացվել է համաձայն Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հրամանի՝ հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) 2024թ. ապրիլի 10-ի ՀՀ ԿԲ կողմից գրանցված Պարտատոմսերի Ծրագրային Ազդագրի 3.4.1.4 կետում նշված դրույթն առ այն, որ մինչև պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի առաջնային տեղաբաշխման ավարտը չտեղաբաշխված պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամկետը կարող է երկարաձգվել Բանկի գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ մինչև 20 օրացուցային օրով՝ Ազդագրում սահմանված պայմաններով:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի օգոստոսի 26-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAB2EER9 թողարկման դրամային և AMACBAB2FER6 թողարկման դոլարային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային շուկայի Bbond հարթակում ցուցակելու նպատակով:

***Էական փաստեր և տեղեկություններ Բանկի՝ AMACBAB2GER4 թողարկման դրամային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակման նպատակով Հայաստանի ֆոնդային բորսա դիմումի ներկայացման վերաբերյալ.***

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի նոյեմբերի 05-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAB2GER4 թողարկման դրամային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային շուկայի Bbond հարթակում ցուցակելու նպատակով:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի նոյեմբերի 12-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAS10ER7 թողարկման լրացուցիչ սովորական (հասարակ) բաժնետոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ցուցակելու նպատակով:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի դեկտեմբերի 04-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAB2IER0 թողարկման դրամային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային շուկայի Bbond հարթակում ցուցակելու նպատակով:

***Էական փաստեր և տեղեկություններ Բանկի՝ AMACBAB2HER2 թողարկման դոլարային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակման նպատակով Հայաստանի ֆոնդային բորսա դիմումի ներկայացման վերաբերյալ.***

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի դեկտեմբերի 06-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAB2HER2 թողարկման դոլարային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային շուկայի Bbond հարթակում ցուցակելու նպատակով:

***Էական փաստեր և տեղեկություններ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ:***

Տեղեկացնում ենք, որ տեղի է ունեցել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Բանկ) բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով) առանց բաժնետերերի ֆիզիկական ներկայության՝ քվեաթերթիկներով (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) քվեարկելու միջոցով:

Ժողովին գրանցվելը և քվեարկությունը հասանելի են եղել 2024 թվականի նոյեմբերի 12-ի ժամը 09:00-ից սկսած մինչև նոյեմբերի 21-ի ժամը 18:00-ն:

Համաձայն Բանկի խորհրդի 17/10/2024թ.-ի նիստի թիվ 157-Բ4 որոշման՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք են ունեցել բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2024 թվականի հոկտեմբերի 17-ի, Երևանի ժամանակով ժամը 17:00-ի դրությամբ ընդգրկված են եղել Բանկի բաժնետերերի ռեեստրում և ունեցել են բաժնետոմսերի անձնական հաշիվներ: Այդպիսի բաժնետերերի քանակը կազմել է 5,513 անձ:

Համաձայն Բանկի Հաշվիչ հանձնաժողովի 22/11/2024թ.-ի թիվ 5 արձանագրության՝ ամփոփ տվյալներով 2024 թվականի նոյեմբերի 12-ից 21-ը անցկացված բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու համար գրանցվել և քվեարկությանը մասնակցել են ընդհանուր 4,499,779 (չորս միլիոն չորս հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր յոթանասունինը) հատ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերը, որը կազմում է ընդհանուր քվեարկող բաժնետոմսերի 81.81%-ը (ութսունմեկ ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական տոկոսը):

Ըստ այդմ, Բանկի բաժնետերերի 2024 թվականի նոյեմբերի 12-ից 21-ը անցկացված բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն իրավասու էր (Քվորումն առկա էր):

*Ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները.*

**1. Հաստատել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներ.**

***Բացատրություն***

Համաձայն իր կայքէջում հրապարակված թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ ազդագրի (գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 25/09/2024թ.)՝ Բանկը 2024թ. նոյեմբերի 1-ից մինչև 8-ն իրականացրել է լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխում՝ նախքան տեղաբաշխումն իրականացնելը հնարավորություն ընձեռելով Բանկի բաժնետերերին իրականացնելու նոր թողարկված բաժնետոմսերի նկատմամբ իրենց նախապատվության իրավունքը: Պրոպարկո

ընկերությունը բաժանորդագրվել է բոլոր այն բաժնետոմսերի ձեռք բերմանը, որոնք Բանկի բաժնետերերը ձեռք չեն բերել իրենց նախապատվության իրավունքի շրջանակներում: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը: Տեղաբաշխումն ավարտելուց հետո Ժողովի հաստատմանն են ներկայացվել տեղաբաշխման արդյունքները:

***Որոշում***

Ընդհանուր ժողովը հաստատեց Բանկի կողմից 2024թ. նոյեմբերին իրականացրած լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հետևյալ կերպ.

- Լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակ՝ 485,000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսեր:
- Լրացուցիչ տեղաբաշխման արդյունքում կանոնադրական կապիտալի ավելացում՝ 4,850,000,000 ՀՀ դրամ:

**2. Կանոնադրական կապիտալի ավելացմամբ (բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներով և չբաշխված շահույթի հաշվին) պայմանավորված հաստատել կանոնադրությունը նոր խմբագրությամբ**

***Բացատրություն***

Կանոնադրական կապիտալի ավելացումը կատարվել է լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման և նախորդ տարիների չբաշխված շահույթի հաշվին բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման միջոցով: Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալն ավելացել է 4,850,000,000 ՀՀ դրամով, իսկ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման արդյունքում՝ 29,925,000,000 ՀՀ դրամով: Արդյունքում՝ Բանկի կանոնադրական կապիտալն ավելացել է 34,775,000,000 ՀՀ դրամով և կկազմի 89,775,000,000: Լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման շարժառիթը նոր բաժնետիրոջ ներգրավումն է:
Նոր բաժնետիրոջ ներգրավումը Բանկին կտա հետևյալ առավելությունները.
- Բանկի բաժնետիրական կառուցվածքում հեղինակավոր ֆինանսական հաստատության առկայություն
- Բանկի բիզնեսի ընդլայնում և շուկայի մասնաբաժնի ավելացում
- Բանկի կորպորատիվ կառավարման զարգացում
- Միջազգային ֆինանսական շուկաների հետ համագործակցության ընդլայնում:

Բաժնետոմսերի անվանական արժեքի բարձրացման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման շարժառիթն է կապիտալի համարժեքության նորմատիվի բարելավումը և չբաշխված շահույթի նվազեցումը:

Կանոնադրական կապիտալի ավելացման արդյունքում Բանկի բաժնետոմսերի ընդհանուր քանակը կազմում է 5,985,000 հատ սովորական բաժնետոմս, իսկ բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի ընդհանուր գումարը՝ 89,775,000,000 ՀՀ դրամ:
Տեղաբաշխման արդյունքում Բանկի կողմից հայտարարված բաժնետոմսերի քանակը 3,000,000 հատ սովորական բաժնետոմսերից նվազել է և կազմել 2,515,000 հատ սովորական բաժնետոմս: Ստացված քանակը կլորացնելու նպատակով՝ առաջարկվել է կանոնադրությամբ սահմանել, որ Բանկի կողմից հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 2,500,000 հատ սովորական բաժնետոմս:

***Որոշում***

- Հաստատել Բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ պայմանավորված կանոնադրական կապիտալի ավելացմամբ (բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներով և չբաշխված շահույթի հաշվին) և ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ գրանցման:
- Համաձայն կանոնադրության նոր խմբագրության՝ Բանկի կանոնադրական կապիտալը 55,000,000,000 ՀՀ դրամի փոխարեն կկազմի 89,775,000,000 ՀՀ դրամ, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 10,000 ՀՀ դրամի փոխարեն կկազմի 15,000 ՀՀ դրամ, իսկ հայտարարված բաժնետոմսերի քանակը 3,000,000 հատի սովորական բաժնետոմսի փոխարեն կկազմի 2,500,000 հատ սովորական բաժնետոմս:

**3. Հաստատել «Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության» (Պրոպարկո ընկերության), Բանկի և «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի միջև կնքվող բաժնետիրական համաձայնագրի արդյունքում կանոնադրությունը նոր խմբագրությամբ:**

***Բացատրություն***

Ինչպես ներկայացվել է Բանկի կողմից իր կայքէջում հրապարակված թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ ազդագրում (գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 25/09/2024թ.)՝ Պրոպարկո ընկերության հետ ստորագրվել են կամ կստորագրվեն պայմանագրեր, ինչպիսիք են ներդրումային պայմանագիրը և բաժնետիրական համաձայնագիրը, որոնք կկարգավորեն Պրոպարկո ընկերության կողմից կատարվող ներդրման և Բանկի կառավարման հետ կապված հարցեր: Բաժնետիրական համաձայնագիրը, որը ստորագրվելու է Բանկի, Պրոպարկո ընկերության և «ԱԿԲԱ

ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի միջև նախատեսում է որոշակի փոփոխություններ կատարել Բանկի կանոնադրության մեջ:

Փոփոխությունները հիմնականում առնչվում են Բանկի խորհրդի և բաժնետերերի ընդհանուր ժողովի միջև իրավասությունների վերաբաշխմանը և խորհրդին վերապահված մի շարք հարցերով որոշում կայացնելու համար անհրաժեշտ ձայների փոփոխությանը: Մանրամասները ներկայացված են Կանոնադրության նոր խմբագրության նախագծում:

***Որոշում***

Հաստատել Բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ պայմանավորված «Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության» (Պրոպարկո ընկերության), Բանկի և «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի միջև կնքվող բաժնետիրական համաձայնագրի պահանջներով և ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ գրանցման: